



ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ

ԿՈՄԻՏԱՍԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ*

Ա

Հայրենի երգն ես դու մեր՝
Վերադարձած հայրենիք:—
Դեմքիդ տանջանքն է դրել
Անագորույն մի կնիք:—
Եվ հանձարի հեռակա
Հուրն է հանգչում ճակատիդ,
Ինչպես մարող ճառագայթ
Արարատի գագաթին:—

Բ

Հայրենի ե՛րգն ես դու մեր
Հալածական, ինչպես ամպ,
Որ քամիներն են ցրել
Եվ տարիներն ապստամբ:—
Ժողովրդի հանձարեղ
Սրտով երկնած ձայն ու ջունջ,
Որ բարբառել ես դարեր
Օտարության մշուշում:

Գ

Առանձին ձայնն է ինչպես
Դառնում հնչյուն հայրենի —

Դաշնության մեջ լոկ հնչեղ
Հայրենական ձայների,—
Այդպես մեր հին դաշնության
Ով մարգարե տարագիր,—
Դու գտանում ես ահա
Ե՛վ ժողովուրդ, և՛ երկիր:

Դ

Հայրենի երգ մեր վսեմ,
Հապարամյա՝ մեր հանձար,—
Լոկ ժողովո՛ւրդն է հյուսել
Քո դաշնությունը պայծառ,—
Քեզ ժողովո՛ւրդն է խոնարհ
Տառապանքով իր ծնել,
Իր ավյունով պահել վառ,
Իր ոգու մեջ ընդունել...

.

Ե

Դու աշխատա՛նքն ես երգել
Եվ քրտինքը մաճկալի,—
Անջուր հանդեր ու հերկեր,
Սիրո երգեր անձկալի...
Դու պանդուխտի տարագիր
Սի՛րտն ես երգել կարոտող՝
Անհայրենիք արագիլ՝
Կապված հուշի նարտով:—

* Կոմիտաս Վարդապետի աճյունը Հայրենիք տեղափոխելու առիթով: Խմբագրություն:

Ձ

Հնչյուններ ես հավաքել
Հենքի համար թո երգի
Դու՝ հանդերից մահաբեր
Հայրենական եզերքի.—
Եվ հայրենի հանդերի
Մրմունջներից չմարող
Հյուսել ես երգ անթերի
Սերունդների համար նոր:—

.....

Ժ

Մեղմ՝ կարկաչում էր թո ջերմ
Երգը՝ երկրում մեր անշող —
Տանիքների վրա մեր
Եվ սրտերի դողանջող:
Կարկաչում էր նա հուշիկ,
Մինչև խորջակն այն դաժան
Հո՛ւշ դարձրեց ու փոշի
Երկիր ու երգ սրբապան...

.....

ԺԴ

Չարհուրելի եռանդով,
Ինչպես քաղցած մի գազան —
Սրբեց կամքով մի քանդող
Երկիր ու տուն սրբապան...
Լափեց եզերքը թո հին՝
Ե՛վ ժողովուրդ, և՛ վաստակ,—
Եվ անապատ ամայի
Դարձավ երկիրն Հայաստան...

.....

Ի

Հալածակա՛ն, որպես թո
Ո՛ղջ ժողովուրդն այն պահին —
Խելակորույս թո ոգով
Չտրվեցի՛ր դու Մահի...
Ո՛չ.—չմեռա՛ր այնժամ դու,
Այլ սարսափից խելագար՝
Երազեցիր դառնալ տուն,
Որ աշխարհում էլ չկար...

ԼԴ

Ո՛վ հայրենի մեր երգի
Հրե հանձար տառապած.
Դու չտեսա՛ր թո երկրի
Արշալույսը փառապանծ...
Իբրև աճյո՛ւն դու եկար,
Իբրև մեռա՛ծ տարագիր,—
Հին դաշնության դու վկա
Եվ առաջին քարակիր...

ՃԴ

Արդյոք կարո՞ղ էր թո սուրբ,
Բեկված հոգին երազել,
Որ դառնալու ես մի օր
Քո հայրենիքը վսեմ,
Որ պիտի շուրջդ բուրի
Սերն ու զգվանքը մեր այս
Եվ Չարենցը համբուրի
Քո շրթունքները մեռած...

.....

ՃԵ

Կարոտով խոր իբրև վերք
Եվ երկյուղով սրբապան —
Խոնարհվել եմ ահա ես
Աճյունիդ դեմ երգաձայն,—
Սիրտն ու հոգին իմ ահա
Նույն ափսոսանքն են հորդում՝
Օ՛, իմ անդարձ ննջած հայր.
Որ չտեսար թո որդուն...

.....

ՃԻԶ

Կարդում եմ ես թո հանգած,
Մագաղաթյա կոպերին
Եվ ձակատի վրա բարձր —
Մտերմություն մի վերին:—
Նույն մտորումն ու անհուն
Նայիրյան խոհն հարապատ,—
Նույն երազանքն անանուն՝
Հապարամյա՛ երազած:—

ՃԻԵ

Ճգնավորի դեմքով ծեր՝
Մարտիրոսի դեմքով սուրբ,—
Օ՛, ուրվական դու վսեմ,
Թափառական մեր Հիսուս,—
Ճգնավորի ճակատով
Եվ մորմոքով վկայի՝
Նո՞ր ես հառնում ահա դու
Իբրև վկա ներկայի...

.....

ՃԻԹ

Ո՛վ նայիրյան հանձարի
Հապարամյա դու տեսիլ,—
Որքան պրկանք ու չարիք
Դու աշխարհում կրեցիր.—
Մարտիրոսյալ հավիտյան,
Որպես անհող մարգարե —

Դու հանգրվան չգտար
Կյանքում—դարեր ու դարեր:—

ՃԼԱ

Իբրև աճյո՛ւն դու դարձար
Քո հայրենիքը ազատ,—
Իբրև մատունք մի պայծառ,
Իբրև նշխար հարազատ,—
Եվ հայրենի քո հողում,
Հին հանձարի իբրև սերմ՝
Կբարձրանա՛ նա բեղուն,
Երկրիդ ցողով ցողված ջերմ:—

ՃԽ

Թո՛ղ անոթվի՛ վերջապես
Հազար սրով վարկած խոր —
Սիրտդ հողում մեր հրկեպ,—
Որպես գրկում սիրած մոր:—
Որպես վսե՛մ ողջակեպ՝
Հոգնած աճյունը քո թո՛ղ
Գտնի հանգի՛ստ վերջապես
Եվ հայրենի դառնա հող...

ՃԽԱ

Եվ հայրենի այդ հողից,
Չանցած գարուն մի քանի —
Կեկեն ջքե՛ղ և ուղիղ
Երգի շյուղե՛ր կենդանի:—
Եվ ջշունջում երգեցիկ,
Հնչեղ երգում նրանց խոր —
Կապրի հանձարը քո ջինջ՝
Անմահ երթի՛ ելած նոր...

ՃԽԲ

Կխաղաղվի՛ վերջապես
Խոնջած աճյունը քո հար —
Դարձած մոխի՛ր կենսաբեր,
Դարձած ավյո՛ւն, դարձած քար:—
Անկացա՛ծ, սրբացած
Կապրի ոգիդ հնայող՝
Դարձած ելևո՛ղ երգի ձայն —
Եվ հայրենի՛ դարձած հող...

1936 թ.

(ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ, Պոեմներ, բանաստեղծություններ, Երևան, 1984 թ., էջ 610—652)

